

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



### 2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվության մասին

«Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-28-Ն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 4 փետրվարի 2004թ., թիվ 7 (306)) սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումները, «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հոդվածներով սահմանված պահանջների համաձայն, արտացոլվել են «2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում», ինչը հաստատվել է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) կողմից և հրապարակվել (ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր (ԳՆԱՏ) թիվ 4<sup>1</sup>, 23 փետրվարի 2005թ.):

Հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված աշխատանքները (միջոցառումները), 2005թ. նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալը (հաշվի առած պարբերականությունը) կազմել է 1828 միավոր, որից ամբողջապես իրականացվել են 1826-ը կամ 99.9%-ը:

«Տնտեսության հիմնական միջոցների արժեքը (հաշվեկշռային և մնացորդային) ըստ տնտեսության ճյուղերի» (ծածկագիր՝113001) և «ՀՀ ազգային հարստությունը» (ծածկագիր՝113002) աշխատանքներն իրականացվել են մասնակիորեն, պայմանավորված հանրապետության բնակֆոնդի միասնական շուկայական գներով վերագնահատված հնարավորինս համընդգրկուն և ամբողջական վարչական տեղեկատվության բացակայության հանգամանքով, ինչպես նաև հանրապետության տարածքում հիմնական միջոցների համատարած հաշվեգրման (հաշվառման) իրականացման անհրաժեշտությամբ :

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրով նախատեսված միջոցառումները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրված դրամաշնորհների միջոցները:

Ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա գանձապետական ֆինանսավորումը կազմել է նախատեսված ֆինանսավորման 94.7%-ը (549.7 միլիոն դրամ): Դրամաշնորհային

միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է դոնոր կազմակերպությունների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից:

2005թ-ին թղթային և էլեկտրոնային կրիչներով հրապարակվել են 121 անվանում վիճակագրական հրապարակումներ (թղթային կրիչներով 11.6 հազարից ավելի տպաքանակով), որոնք նաև տեղադրված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ ՀՀ ԱՎԾ) բաց գրադարանում (գրադարանային ֆոնդը 2005թ. տարեվերջին կազմել է 7550 միավոր) և գետեղված են, 1999թ. ապրիլից գործող, ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքում:

Տեղեկատվության միջազգային փոխանակման շրջանակում 2005թ-ին հրապարակման նպատակով էլեկտրոնային փոստով 287 պատասխան է ներկայացվել համապատասխան վիճակագրական կազմակերպություններին, որից ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին՝ 167:

2005թ-ին ՀՀ ԱՎԾ են այցելել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ազգային վիճակագրական ծառայությունների 8 հանձնախմբեր և 17 փորձագետներ, իսկ, ընդհանուր առմամբ, միջազգային համագործակցության շրջանակում տեղի է ունեցել 113 հանդիպում: ՀՀ ԱՎԾ աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան 12 երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների և այլ միջոցառումների (այցեմասնակցությունների թիվը՝ 42):

Հայաստանում կազմակերպված մնանատիպ միջգերատեսչական բնույթի և այլ կազմակերպությունների մասնակցությամբ միջոցառումներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների այցեմասնակցությունները կազմել են 94:

2005թ-ին ՀՀ ՎՊԽ կողմից ընդունվել է 80 որոշում, որից 46 նորմատիվ, 14 անհատական և 20 արձանագրային: Նորմատիվ որոշումները ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են և հրապարակվել ՀՀ ԳՆԱՏ-ներում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2005թ. ընթացքում փաստաթղթաշրջանառության թվային պատկերը հետևյալն է.

1. Մտից թղթակցություն, ընդամենը - 5115 միավոր
2. Ելից թղթակցություն, ընդամենը – 8366 միավոր:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքներից կարևորությամբ և/կամ մասշտաբայնությամբ հիշատակման է արժանի Եվրամիության «ՏԱՄԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-6» նախագծի շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» ազգային դասակարգիչը (տես նաև՝ ՀՀ ԳՆԱՏ, 11 մարտի 2005թ., թիվ 5<sup>1</sup>, I-VI հատորներ), որի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրամիությունում կիրառվող CPA և PRODCOM դասակարգիչները: Սույն դասակարգիչն, ըստ էության, բխում է ՀՀ ԱՎԾ կողմից Եվրամիության «ՏԱՄԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-2» նախագծի շրջանակում, Եվրոպական համայնքի տնտեսական գործունեության տեսակների (NACE) դասակարգչի հիման վրա մշակված և կիրառվող «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» (տես՝ ՀՀ ԳՆԱՏ, 14 նոյեմբերի 2001թ., թիվ 19(82)) տրամաբանությունից և ըստ այդմ, նախադրյալներ ստեղծում երկրում տեխնիկատնտեսական տեղեկատվության կողավորման միասնական ու արդեն իսկ ավարտուն և ամբողջական՝ «գործունեության տեսակ - արտադրանք» դասակարգչային գործիքակազմի ներդրման համար:

\*

\*

\*

«2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» կազմված է 2004-2006 թվականների Եռամյա ծրագրի հիման վրա: Եռամյա ծրագրով սահմանված ուղղությունները խարսխված են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (15.04.1992թ.) և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի (14.04.1994թ.) կողմից ընդունված՝ «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»-ի և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների և ստանդարտների վրա: Պաշտոնական վիճակագրության միջազգային ստանդարտները և երկրների վիճակագրությունների՝ դրանց համապատասխանությունը վարում է Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ):

ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը (SSՀՄ) պարունակում է ստանդարտների մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> (ԱՄՀ SSՀՄ-ին Հայաստանն անդամագրվել է 2003թ. նոյեմբերի 7-ից): Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ մեթոդաբանական փաստաթղթեր (մեթատվյալներ) անգլերեն լեզվով (հայերեն և ռուսերեն տարբերակներն առկա են ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքում՝ <http://www.armstat.am/aem/Metadate/default.htm>) SSՀՄ տվյալների կատեգորիաների մասով ՀՀ վիճակագրական փորձառության վերաբերյալ, ինչն արտացոլում են ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>

### «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույց

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2005թ. վերաբերյալ առավել յուրաժամանակ (օպերատիվ) և ամբողջական վիճակագրական հրապարակումն է, որն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը:

Չեկույցի բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված Տվյալների տարածման ստանդարտներով սահմանված հատվածներին համապատասխան:

2005 թվականի արդյունքների օպերատիվ ամփոփված ցուցանիշներով.

- ՀՀ մշտական բնակչության թվաքանակը տարեվերջին կազմել է 3219.4 հազ. մարդ: Տարեսկզբի նկատմամբ արձանագրվել է թվաքանակի 3.6 հազարով աճ: 2005թ-ին արձանագրվել է ծնելիության բացարձակ թվաքանակի նվազում՝ 2005 թ-ին գրանցվել են 37509 ծնվածներ, 2004 թ-ի 37520 ծնվածների համեմատ, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով, պահպանվել է նույն մակարդակի վրա՝ կազմելով 11.7 պրոմիլ: Մահացության ընդհանուր գործակիցն աճել է 0.2 պրոմիլային կետով (2005թ. մահվան 26278 դեպք, 2004թ-ին արձանագրված 25679-ի դիմաց) և կազմել է 8.2 պրոմիլ: Գրանցվել է մայրական մահացության 6 դեպք 2004թ. 10 դեպքի դիմաց: Կյանքի առաջին տարում երեխաների մահացության դեպքերը կազմել են 460 և 2004թ. համեմատ ավելացել 30-ով: 2005թ. գրանցված ամուսնությունների քանակը 2004թ.-ի համեմատ նվազել է 2.1%-ով և կազմել 16623, իսկ ամուսնալուծությունների քանակն աճել է 25.3%-ով և կազմել 2466 (1000 ամուսնությանը բաժին է ընկել 148 ամուսնալուծություն):

- Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշի աճը 2005թ-ին նախորդ տարվա նկատմամբ կազմել է 113.9%: 2005թ. ՀՆԱ-ն կազմել է 2228.0 մլրդ. դրամ (մոտ 4.9 մլրդ ԱՄՆ դոլար), նախորդ տարվա 1896.4 մլրդ դրամի (3.6 մլրդ ԱՄՆ դոլարի) նկատմամբ: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2005թ. կազմել է 692.5 հազար դրամ (1513 ԱՄՆ դոլար) նախորդ տարվա 590.1 հազար դրամի (1106 ԱՄՆ դոլարի) դիմաց:

- արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը՝ 107.5 %,
  - գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը՝ 111.2 %,
  - իրականացված կապիտալ շինարարության ծավալի աճը՝ 134.2 %,
  - մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի աճը՝ 109.3 %,
  - բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի աճը՝ 117.1 %,
  - արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 2718.3 մլն. ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նկատմամբ աճել 131.1 %-ով: Այդ թվում, արտահանումը՝ 950.4 մլն. ԱՄՆ դոլար (աճը՝ 131.5%), ներմուծումը՝ 1767.9 մլն. ԱՄՆ դոլար (աճը՝ 130.9 %),
    - միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 52040 դրամ և 2004թ. համեմատությամբ ավելացել 19.5 %-ով (բյուջետային համակարգում՝ 35781 դրամ, աճը՝ 123.9 %, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում՝ 64734 դրամ, աճը՝ 117.1 %),
    - բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2005թ. տարեվերջին կազմել է 96272 մլն. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 81375 մլն. դրամի դիմաց (աճը կազմել է 118.3 %),
    - 2004թ. նկատմամբ 2005թ.-ին սպառողական զների ինդեքսի ցուցանիշը կազմել է 100.6% (դեկտեմբերը դեկտեմբերի նկատմամբ՝ 99.8 %),
    - 2005թ. ԱՄՆ դոլարի միջին տարեկան հաշվարկային փոխարժեքը նվազել է 14.2%-ով և կազմել 457.69 դրամ, 2004թ. 533.45 դրամի դիմաց,
    - 2005թ. պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 8.1%, 2004թ. 9.6%-ի դիմաց:
      - 2005թ. Հայաստան այցելած միջազգային զբոսաշրջիկների թվաքանակն ըստ նախնական տվյալների ամփոփման, կազմել է 318.6 հազար նախորդ տարվա 262.9 հազարի դիմաց (աճը՝ 121.1%), իսկ զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 268.7 հազար մարդ (աճը՝ 121.5%):
      - 2005թ. արձանագրվել է տարափոխիկ հիվանդությունների 144510 դեպք, 2004թ. 170980 դեպքի դիմաց:
      - 2005թ. գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը կազմել է 8875, 2004թ. 10083-ի դիմաց:
        - 2005թ. հանրապետության տարածքում գրանցվել է արտակարգ իրավիճակների 2240 դեպք (2004թ.՝ 2366), որից՝ 405-ը տարերային աղետներ (2004թ.՝ 614) և 1835-ը տեխնածին աղետներ (2004թ.՝ 1752):
        - 2005թ., ըստ նախնական տվյալների, անշարժ գույքի նկատմամբ հանրապետությունում իրականացվել է 42671 օտարման գործարք, 2004թ-ի 40793 գործարքի դիմաց:
- Ձեկույցը ներառում է նաև «Սեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը: Բացի այդ, ներկայացված են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ» և «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածները:

Ձեկույցը պարունակում է նաև 2005թ. ընթացքում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության փաստացի հրապարակումների ամբողջական ցանկը:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը հասանելի է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության բաց գրադարանում (721 սենյակ) և ինտերնետային էջից՝

[http://www.armstat.am/arm/Publications/2004/sv\\_12a\\_04/index.html](http://www.armstat.am/arm/Publications/2004/sv_12a_04/index.html) հասցեով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
Վիճակագրական վերլուծական զեկույց**

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) և Համաշխարհային բանկի (ՀԲ) համատեղ զեկույցը միտված է արտացոլելու Հայաստանի սոցիալական վիճակի և կենսամակարդակի փոփոխությունները: Սույն զեկույցը բովո՞վ վեցերորդն է ՀՀ ԱՎԾ կողմից ամենամյա պարբերականությամբ հրատարակվող համանուն զեկույցների շարքում: Նշյալ զեկույցների հիմնական նպատակն է տրամադրել տեղեկատվություն երկրում աղքատության մակարդակի և սոցիալական վիճակի վերաբերյալ: ՀԲ-ի համար սույն զեկույցը մասն է կազմում Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման ծրագրի, որի նպատակն է ոչ միայն վերլուծել և դիտարկել Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակն ու աղքատության մակարդակը, այլև աջակցել ՀՀ ԱՎԾ-ին և ՀՀ կառավարությանը կառուցելու տնային տնտեսություններից ստացվող որակյալ տվյալների կայուն համակարգ և կատարելագործել Հայաստանի մասնագետների այդ տվյալները վերլուծելու և աղքատության մակարդակի փոփոխությունները վերահսկելու կարողությունները:

Թեև զեկույցի հիմքում հիմնականում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներն են, օգտագործված է նաև ՀԲ-ի, ՄԱԿ-ի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, ինչպես նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների վիճակագրական տեղեկատվությունը: Չեկույցում օգտագործվել են նաև ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների վարչական վիճակագրական ամբողջական ցուցանիշները:

**2004թ.-ի ՏՏԿԱՀ-ն իր բնութով առավել կատարելագործվածն է ի տարբերություն նախորդ հետազոտությունների:** 2003թ.-ի սեպտեմբերից մինչև 2005թ.-ի նոյեմբերը ՀԲ տեխնիկական աջակցությամբ, բազմաթիվ խորհրդատվությունների և գործնական աշխատանքների արդյունքում՝ 1) արդիականացվեց հետազոտության ընտրանքի ձևավորումն՝ օգտագործելով 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, 2) ընդլայնվեց ընտրանքի չափն՝ ապահովելով տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, 3) վերանայվեց ՏՏԿԱՀ հարցաշարը՝ արտացոլելով 1998/99թթ.-ից ի վեր տեղ գտած տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ինչպես նաև զբաղվածության վերաբերյալ համապարփակ բաժին ավելացվեց հարցաշարում, 4) ավելի խորը վերապատրաստում անցավ հետազոտությունն իրականացնող անձնակազմը: Կատարելագործված այդ հետազոտությունը սկսվեց 2004թ.-ին՝ փաստացի տեղեկատվություն հավաքագրելով 2004թ.-ի ապրիլի 1-ից 2005թ.-ի մարտի 31-ը 6816 տնային տնտեսություններից (5088 քաղաքային և 1728 գյուղական):

**Չեկույցում օգտագործվել է ՀԲ կողմից մշակված աղքատության մակարդակի գնահատման առավել նշգրտված մեթոդաբանություն:** Մեթոդաբանական փոփոխություններն իրականացվել են ՀԲ հետ սերտ համագործակցությամբ և վերջինիս տեխնիկական աջակցությամբ: Ի տարբերություն ՀՀ ԱՎԾ-ի կողմից մինչ այդ կիրառվող մեթոդաբանության, նոր մեթոդաբանությունն ունի հետևյալ առանձնահատկությունները. (1) հիմնված է սպառման ագրեգատի ավելի ընդարձակ հաշվարկման վրա,

քանի որ այս անգամ *սպառման ազրեզատն*, ի լրումն ստանդարտ պարենային և ոչ պարենային բաղադրիչների, ներառում է նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը, այն է՝ տնային տնտեսության կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքներից ստացվող ծառայությունների արժեքը, (2) *սպառման ազրեզացված ցուցանիշը* ճշգրտվել է՝ հաշվի առնելով չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերությունները, ինչպես նաև ճշգրտվել են տնային տնտեսության այն ծախսերը, որոնք հավասարապես բաշխվում են տնտեսության անդամների միջև: Արդյունքում, կիրառվել է *մեկ չափահաս անձի հաշվով համարժեք սպառումը*՝ նախկինում կիրառվող մեկ շնչի հաշվով սպառման գնահատման մոտեցման փոխարեն, և (3) 2004թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա ստացվել (փաստագրվել) է *Նոր նվազագույն աղքատության գամբյուղը*:

Նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկման համար նվազագույն միջին կալորիականությունը հաշվարկվել է օգտագործելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տարբեր ժողովրդագրական խմբերի համար (ըստ սեռատարիքային բաշխման) անհրաժեշտ կալորիականության համար սահմանված չափանիշները և այդ ժողովրդագրական խմբերի բնակչության համամասնության մասին տեղեկատվությունը: Այդ մեթոդով Հայաստանի համար միջին կալորիականությունը ստացվել է 2232 կկալ օրական մեկ շնչի հաշվով (նախկինում կիրառվող 2100 կկալ դիմաց): Նոր զամբյուղը կիրառվել է 2004թ.-ի ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը հաշվարկելու համար:

Աղքատության ընդհանուր գիծը հաշվարկվել է գործակցային եղանակով, ըստ որի՝ ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը գնահատվել է 35.6 տոկոս: Այսպիսով, ձևավորվել են աղքատության մակարդակի գնահատման երկու գծեր՝ **պարենային և ընդհանուր**, որոնց հիման վրա էլ գնահատվել են ծայրահեղ աղքատության և ընդհանուր աղքատության մակարդակները: Այդ գնահատականները կկիրառվեն որպես համեմատության հիմք հաջորդ մի քանի տարիների ընթացքում աղքատության մակարդակի գնահատման համար և արժեքային արտահայտությամբ կճշգրտվեն միայն գների փոփոխությունները հաշվի առնելով:

Ըստ 2004թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների, **աղքատության պարենային գծի** փաստագրված արժեքն, ըստ մեկ չափահաս անձի սպառմանը համարժեք ցուցանիշի, կազմել է **12467 դրամ** (1998/99թ.-ի մեկ շնչի հաշվով սպառման ցուցանիշը կազմել էր 7194 դրամ), իսկ **աղքատության ընդհանուր գծի** փաստագրված արժեքն, ըստ մեկ չափահաս անձի սպառմանը համարժեք ցուցանիշի՝ կազմել է **19373 դրամ** (1998/99թ.-ի մեկ շնչի հաշվով սպառման ցուցանիշը կազմել էր 11735 դրամ): 2004թ.-ի հետազոտության արդյունքները 1998/99թթ.-ի արդյունքների հետ համեմատելու նպատակով, 1998/99թթ.-ի աղքատության գծերը վերահաշվարկվել են ըստ մեկ չափահաս անձի սպառման համարժեք ցուցանիշի:

Նշյալ ցուցանիշների հիման վրա **աղքատ են** գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության գծից, իսկ **շատ աղքատ կամ ծայրահեղ աղքատ** գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել պարենային, կամ ծայրահեղ աղքատության գծից:

**Աղքատության հիմնական ցուցանիշները**

	1998/99թ.				2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն	Շատ աղքատ	Աղքատ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
<b>Քաղաքային բնակավայրեր</b>	<b>26.2</b>	<b>62.1</b>	<b>20.1</b>	<b>8.7</b>	<b>7.5</b>	<b>36.4</b>	<b>8.4</b>	<b>2.8</b>
Երևան	24.8	58.4	18.7	7.9	6.1	29.2	6.5	2.2
այլ քաղաքներ	27.4	65.5	21.5	9.4	9.2	43.9	10.3	3.5
<b>Գյուղական բնակավայրեր</b>	<b>14.1</b>	<b>48.2</b>	<b>13.3</b>	<b>5.1</b>	<b>4.4</b>	<b>31.7</b>	<b>5.7</b>	<b>1.6</b>
<b>Ընդամենը</b>	<b>21.0</b>	<b>56.1</b>	<b>17.2</b>	<b>7.2</b>	<b>6.4</b>	<b>34.6</b>	<b>7.4</b>	<b>2.4</b>

Համաձայն ստացված տվյալների, Հայաստանում աղքատությունը զգալիորեն նվազել է 1998/99-2004թթ.-ի ժամանակահատվածում: Աղքատ բնակչության մասնաբաժինը կրճատվել է 38.3 տոկոսով՝ մոտ 56 տոկոսից նվազելով՝ կազմել է մոտ 35 տոկոս: Առավել արագ նվազել է ծայրահեղ աղքատությունը, մոտ 70 տոկոսով՝ 21 տոկոսից նվազելով մինչև 6.4 տոկոսի: Աղքատությունը դարձել է ավելի մակերեսային և



նվազ սուր, քանզի զգալի նվազել են նաև աղքատության խորությունն ու սրությունը: 2004թ.-ին աղքատության խորությունը գնահատվել է 7.4 տոկոս՝ նվազելով 1998/99թ.-ին գրանցված 17.2 տոկոսի համեմատ, իսկ աղքատության սրությունը գնահատվել է 2.4 տոկոս (7.2 տոկոսի համեմատ): Չնայած այդ ցուցանիշներին, աղքատությունը դեռ լուրջ հիմնախնդիր է հանդիսանում Հայաստանի համար, քանզի բնակչության 34.6 տոկոսը կամ մոտ մեկ միլիոն մարդ դեռ աղքատ է, իսկ նրանցից 200 հազարը՝ ծայրահեղ աղքատ:

Աղքատության խորության 7.4 տոկոս գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ, և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի արժեքի 7.4 տոկոսին համարժեք ռեսուրսներ և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե աղքատության խորությունը հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա այդ ցուցանիշը ցույց է տալիս աղքատության պակասարդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին սպառումը ցածր աղքատության գծից: Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը:

Եկամուտների կամ սպառման անհավասարաչափ բաշխման աստիճանը բնակչության տարբեր խավերի միջև որոշվում է Ջինիի գործակցով: Համաձայն հետազոտության արդյունքների, Ջինիի գործակիցը 2004թ., ըստ եկամուտների կազմել է 0.395 (1998/99թթ.-ի 0.597-ի դիմաց), իսկ ըստ սպառման՝ 0.260 (1998/99թթ.-ի 0.301-ի դիմաց): Չնայած դրան, 2004թ. Հայաստանում արձանագրված Ջինիի գործակիցն ըստ եկամուտների ամենաբարձրն է Եվրոպայի և կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների շարքում:

1998/99-2004թթ.-ի ընթացքում իրական արտահայտությամբ աճել է և՛ սպառումը, և՛ եկամուտը: Բոլոր տնային տնտեսությունների համար մեկ չափահաս անդամին համարժեք ամսական սպառումն աճել է 20 տոկոսով, իսկ մեկ չափահաս անդամին համարժեք ամսական եկամուտն աճել է 30 տոկոսով: Ամենաաղքատ քվանտիլային խումբը գրանցել է իրական արտահայտությամբ և՛ եկամտի (78 տոկոս), և՛ սպառման (36 տոկոս) ամենամեծ աճերը: Սպառման ամենամեծ աճ գրանցվել է Երևանում, իսկ եկամուտն առավել աճել է գյուղական վայրերում:

#### **Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ բնակչության սուբյեկտիվ գնահատականները**

2004թ.-ի հետազոտության ընթացքում տնային տնտեսության 16 և բարձր տարիքի առկա անդամները պատասխանել են նաև մի շարք հարցերի, որոնց հիման վրա ստացվել է կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը: Աղքատությունը, որպես կանոն, կարելի է դիտարկել որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավիճակ: Օբյեկտիվ է, եթե թե՛ նյութական, և թե՛ ոչ նյութական մոտեցումների դեպքում համեմատության համար կիրառվում են քանակական համադրելի ցուցանիշներ և չափանիշներ: Սուբյեկտիվ իրավիճակ է, եթե թե՛ նյութական, և թե՛ ոչ նյութական մոտեցումների դեպքում համեմատման համար կիրառվում են իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետները: Հայաստանում սոցիալ-տնտեսական պայմաններին տրված սուբյեկտիվ գնահատականները շատ ավելի ցածր էին մեկ չափահաս անձի սպառմանը համարժեք ազդեցատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի համեմատ: Ըստ սուբյեկտիվ գնահատականի, ծայրահեղ աղքատությունը կազմել է ընդամենը 3.3%, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված ծայրահեղ աղքատությունը գնահատվել է 6.4%: Նմանապես, իրենց աղքատ են համարել բնակչության 17%-ը, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա աղքատ են գնահատվել 28.2%-ը:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի գնահատման ամբողջացված հետազոտության ժամանակ պարզվել է նաև հարցմանը մասնակից ընտանիքների 16-ից բարձր տարիքի առկա անդամների տնակետը և վստահության աստիճանը տարբեր հաստատությունների նկատմամբ: Այդ սոցիոլոգիական հարցման արդյունքում պատասխաններ են ստացվել 19 801 անձանցից: Ըստ այդ հարցման արդյունքների, բնակչությունն ընդհանուր առմամբ վերապահումներով հիմնականում վստահում է եկեղեցուն և զինված ուժերին՝ 87 տոկոս: Բավական բարձր է նաև վստահությունը հեռուստատեսության և լրատվամիջոցների հանդեպ 75 տոկոս: Անվստահության աստիճանն ամենաբարձրն էր Ազգային Ժողովի նկատմամբ, քանի որ 16-ից բարձր տարիքի բնակչության 48 տոկոսը նշել են, որ չեն վստահում այդ կառույցին:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցը հասանելի է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության բաց գրադարանում (721 սենյակ) և ինտերնետային էջից՝ <http://www.armstat.am/arm/Publications>: